



ՏԵՂԵԿԱՆՔ

2022 թ. մարտի 27-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դիտարկման արդյունքների վերաբերյալ

2022 թ. մարտի 27-ին Հայաստանի Հանրապետության Վեդի խոշորացված համայնքում տեղի է ունեցել տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) համամասնական ընտրակարգով համայնքի ավագանու ընտրություն:

«Ականատես» դիտորդական առաքելության կողմից իրականացվել է երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն:

«Ականատես» դիտորդական առաքելության երկարաժամկետ դիտորդը հետևել է նախընտրական քարոզչության ընթացքին և ուսումնասիրել ընտրությունների վարչարարությունը, գործողությունների համապատասխանությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) կողմից սահմանված ժամանակացույցին, քաղաքական ուժերի և նրանց շտաբների գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, վարչական ռեսուրսի չարաշահումը և ընդհանուր մթնոլորտը: Դիտորդը տեղում աշխատել է ընտրական հանձնաժողովների, շտաբների հետ: Տվյալների հավաքագրումը կատարվել է գրասենյակային հետազոտության, առցանց բաց տվյալների վերլուծության, անմիջական դիտարկումների, հանդիպումների, հարցազրույցների, ինչպես նաև՝ մամուլի լուսաբանումներին հետևելու միջոցով: Անուղղակիորեն ստացված տեղեկությունների ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով՝ դրանք հնարավորինս ստուգվել են մի քանի անկախ աղբյուրների միջոցով:

Ընտրությունների օրը առաքելությունը իրականացրել է շրջիկ դիտորդություն: 2 շրջիկ խումբ դիտարկել են համայնքներում տիրող մթնոլորտը, այցելել են 22 ընտրատեղամաս, դիտարկել են համայնքապետարանի, գյուղապետարանների և կուսակցությունների շտաբերին հարող տարածքները:

Դիտարկման արդյունքներ

«Ականատես» դիտորդական առաքելության կողմից նախընտրական ժամանակահատվածում և քվեարկության օրն իրականացված դիտարկման արդյունքները ներկայացվում են ստորև:

Նախընտրական ժամանակահատված

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի աշխատանք

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հիմնականում գործել է համաձայն Ընտրական օրենսգրքի պահանջների և ընթացակարգերի:

Դիտարկված ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում գրանցվել է 2 կուսակցությունների ընտրական ցուցակ:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի աշխատանքի դիտարկման գործընթացում դիտորդի իրավունքների խոչընդոտման դեպքեր չեն եղել:

Նախընտրական շրջանում բողոքներ չեն եղել: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին Ավագանու երկու թեկնածուներ՝ Պետրոսյան Անուշ և Խալաթյան Գոռը ինքնարացարկի դիմում են ներկայացրել:

Նախընտրական քարոզչություն

Ընտրական շտաբներ

Նախընտրական ժամանակահատվածում այցելելություններ են եղել կուսակցությունների նախընտրական շտաբ/գրասենյակներ: Ըստ տրամադրված տվյալների՝ Զաղաքացիական պայմանագիր կուսակցության քարոզչական աշխատանքներում ներգրավված է եղել մինչև 50 կամավոր, իսկ «Իմ հզոր համայնք» կուսակցությունը ներգրավել է մինչև 100 կամավոր :

Քարոզչանյութերի տարածում

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր՝ կապված չսահմանված/արգելված վայրերում քարոզչական նյութերի տեղադրման հետ: Նման խախտումներ թույլ են տրվել ընտրություններին մասնակցող երկու կուսակցությունների կողմից էլ: Մասնավորապես՝ պաստառները փակցված են եղել փողոցային սյուների, բազմաբնակարան շենքերի, առևտրի օբյեկտների, տաքսիների վրա: ՀՀ ընտրական օրենսգրքը սահմանում է, որ քարոզչական տպագիր նյութերը պետք է տեղեկություններ ներառեն պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ: Անհրաժեշտ տվյալները բացակայել են երկու կուսակցությունների տպագիր քարոզչական նյութերում էլ:

Քարոզչանյութերի վնասում

«Ականատես»-ի դիտորդն արձանագրել է քարոզչական տպագիր նյութերը պատռելու և վնասելու մի քանի դեպք երկու քաղաքական ուժերի մոտ էլ: Մասնավորապես՝ պատռված են եղել «Իմ Հզոր Համայնք» կուսակցության քարոզչանյութերը Նոր Կյանք բնակավայրում, որոնք, ի դեպ, փակցված են եղել ոչ սահմանված վայրերում:

Միջոցառումներ

Թեկնածուների նախընտրական միջոցառումները (հանրահավաքներ, երթերը և բակային հանդիպումներն ընտրողների հետ) հիմնականում ընթացել են հանդարտ, խաղաղ մթնոլորտում, չեն արձանագրվել բռնության, սպառնալիքի, ատելության խոսքի, կաշառքի և բարեգործության դեպքեր բացառությամբ քարոզարշավի եզրափակիչ օրը:

Մարտի 25-ին, Քաղաքացիական պայմանագիր կուսակցության միջոցառումը դեռևս չսկսված, քաշքշուկներ տեղի ունեցան դրա համակիրների և մյուս քաղաքական ուժի երկու ներկայացուցչի միջև, ինչը ուշադրության արժանացավ տեղի ոստիկանների կողմից:

Միջոցառումների ընթացքում հիմնականում թեկնածուների կողմից ներկայացվել են համայնքում առկա խնդիրները և դրանց լուծմանն ուղղված՝ քաղաքական ուժերի ծրագրերը, սակայն քարոզարշավի վերջին օրը թեկնածուները հաճախ հեզնում էին միմյանց և նախընտրական ելույթում փորձում անուղղակիորեն վատաբանել իրար:

Վարչական ռեսուրսի չարաշահում

«Ականատեսի» երկարաժամկետ դիտորդը ուսումնասիրել է նախորդ ամիսների ժամանակահատվածում ՏԻՄ-ի կողմից ընդունված որոշումները՝ ուշադրության կենտրոնում ունենալով համապատասխան համայնքներում իրականացվող ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը, ֆինանսական և հողային հատկացումները, հարկային արտոնությունները:

Արձանագրվել են համայնքի պաշտոնակատար՝ Գարիկ Սարգսյանի որոշումները բնակիչներին սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ: Համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից նշանակված վարչական ղեկավարների առաջարկներով առավել անապահով մի խումբ անձանց/ընտանիքների տրամադրվել է աջակցություն կամ որոշներին արվել է այլ «լավություն»: Իրականացված գործողությունների ցանկը բերված է ստորև.

ք. Վեդի

- 07 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում՝ 50,000, 30,000 և 20,000-ական ՀՀ դրամ՝ 3 բնակչի
- 04 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ հուղարկավորության համար օգնության տրամադրում՝ 40,000 ՀՀ դրամ
- 02 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում՝ 30,000-ական ՀՀ դրամ՝ 3 բնակչի, 20,000-ական ՀՀ դրամ՝ 2 բնակչի և 15,000 ՀՀ դրամ՝ 1 բնակչի
- 28 փետրվարի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում՝ 25,000-ական ՀՀ դրամ՝ 2 բնակչի և 20,000-ական ՀՀ դրամ՝ 3 բնակչի

Փոքր Վեղի

- 15 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ քաղաքացի Անդրանիկ Հարոյանի ինքնակամ շինության օրինականացում

Գոռավան

- 09 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում 25,000-ական ՀՀ դրամ՝ 2 բնակչի
- 03 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում 25,000-ական ՀՀ դրամ՝ 2 բնակչի

Լուսառատ

- 09 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ հուղարկավորության համար օգնության տրամադրում 40,000 ՀՀ դրամ
- 03 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում 20,000 ՀՀ դրամ
- 03 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում 20,000 ՀՀ դրամ՝ 2 բնակչի
- 02 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ 3 ուսանողի վարձի աջակցություն՝ 40,000-ական ՀՀ դրամ՝ 3 ուսանողի
- 28 փետրվարի 2022 թվականի որոշմամբ՝ ուսանողի վարձի աջակցություն՝ 40,000-ական ՀՀ դրամ՝ 2 ուսանողի
- 23 փետրվարի 2022 թվականի որոշմամբ՝ հուղարկավորության համար օգնության տրամադրում 30,000-ական ՀՀ դրամ՝ 2 բնակչի

Տափերական

- 07 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում 30,000-ական ՀՀ դրամ՝ 5 բնակչի և 35,000-ական ՀՀ դրամ՝ 2 բնակչի
- 28 փետրվարի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում 30,000-ական ՀՀ դրամ՝ 2 բնակչի և 25,000-ական ՀՀ դրամ՝ 3 բնակչի

Նոր Կյանք

- 07 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում 20,000-ական ՀՀ դրամ՝ 5 բնակչի

Ոսկետափ

- 04 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ հուղարկավորության համար օգնության տրամադրում՝ 50,000 ՀՀ դրամ
- 03 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում 20,000-ական ՀՀ դրամ՝ 27 բնակչի

Լուսաշող

- 03 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում 20,000 ՀՀ դրամ

Նոր Ուղի

- 03 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում՝ 10,000 ՀՀ-ական դրամ՝ 5 բնակչի

Ուրցաձոր

- 03 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում՝ 40,000-ական ՀՀ դրամ՝ 3 բնակչի և 30,000-ական ՀՀ դրամ՝ 2 բնակչի :

Դաշտաքար

- 02 մարտի 2022 թվականի որոշմամբ՝ հուղարկավորության համար օգնության տրամադրում՝ 60,000 ՀՀ դրամ

Արալեզ

- 28 փետրվարի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում՝ 30,000 ՀՀ դրամ և 25,000 ՀՀ դրամ՝ 2 բնակչի
- 28 փետրվարի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում՝ 40,000-ական ՀՀ դրամ՝ 2 բնակչի
Եղեգնավան
- 24 փետրվարի 2022 թվականի որոշմամբ՝ օգնության տրամադրում՝ 30,000 դրամ

Քվեարկության օր

Ընդհանուր առմամբ, քվեարկության օրն անցել է հանդարտ մթնոլորտում, թեև համայնքի որոշ հատվածներում նկատվել է լարվածություն: Որոշ տեղամասերում գրանցվել են խախտումներ, որոնք թեև չեն ազդել ընտրությունների արդյունքների վրա, սակայն արժանի են ուշադրության:

Քվեարկության ընթացք

Քվեարկության օրվա դիտարկումը շրջիկ դիտորդները սկսել են ընտրական տեղամասերի բացման պահից՝ առավոտյան 08:00-ից: Ընդհանուր առմամբ, քվեարկության օրվա ընթացքին հետևել է 2 շրջիկ խումբ: Ձևավորված 28 ընտրական տեղամասերից դիտորդներն այցելել են 22 ընտրական տեղամասեր: Բացի այդ, դիտորդները նաև հետևել են կուսակցությունների շտաբների ու ՏԻՄ, տեղամասերին հարող տարածքների ընդհանուր միջավայրին և իրավիճակին:

Քվեարկության մասնակցության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Շաղափ գյուղում՝ 78,21%, ամենացածրը՝ Լանջանիստ գյուղում՝ 53,77%: Միջինում մասնակցության ցուցանիշը քվեարկության օրվա ավարտին՝ 20:00-ի դրությամբ կազմել է՝ 63,16% (նախնական տվյալներով ընտրելու իրավունք ունեցող 37,015 քաղաքացուց քվեարկությանը մասնակցել են 23,378-ը):

Ընտրական տեղամասերի կահավորումը հիմնականում կատարվել է պատշաճ կերպով, բացառությամբ 2 ընտրական տեղամասերի, որտեղ խախտվել են օրենքով սահմանված

պահանջները: Դիտորդների զգուշացումից հետո դասավորության հետ կապված թերությունները շտկվել են:

7 ընտրական տեղամասերում նկատվել է ընտանեկան քվեարկության դեպք (ընտանիքի մեկից ավելի անդամների ներկայություն քվեախցիկում): Այս երևույթը, թեև քվեարկության գաղտնիության խախտում է, սակայն միտումնավոր բնույթ չի կրել: Արձանագրվել է բաց քվեարկության՝ մասնավորապես քվեաթերթիկ նկարելու 3 դեպք, ինչի մասին հանձնաժողովի նախագահները հայտնել են ոստիկաններին:

Կողմնակի, առանց վկայականի անհայտ անձինք են ներկա գտնվել ընտրական տեղամասերից 1-ում, ովքեր հեռացվել են տեղամասերից դիտորդների զգուշացումից հետո: Քվեարկության սենյակում մեկ կուսակցությունից 2-3 վստահված անձի միաժամանակյա ներկայություն է գրանցվել 3 տեղամասերում:

Միջադեպեր

Տեղամասերում տարածված են եղել միևնույն դիտորդական կազմակերպության կողմից հավատարմագրված երկու դիտորդի միաժամանակյա ներկայության դեպքերը: Տվյալ խախտումը եղել է «Ժողովրդավարության իրավունքի միջազգային կենտրոն» ՀԿ-ի կողմից, որի ներկայացուցիչները երբեմն ներկայացել են որպես միջազգային դիտորդ: Մասնավորապես՝ նկատվել է տվյալ կազմակերպության դիտորդների միաժամանակ տեղամաս մտնելու 6 փորձ, որոնք կանխվել են միայն «Ականատես»-ի ներկայացուցչի կողմից հանձնաժողովի նախագահին զգուշացնելուց հետո: Երկու տեղամասում փաստացի ներկա է գտնվել նշված կազմակերպության 2-ական դիտորդ, որոնցից մեկը հեռացվել է միայն «Ականատես»-ի ներկայացուցչի կողմից հանձնաժողովի նախագահին զգուշացնելուց հետո: Մեկ ընտրական տեղամասում տվյալ խախտումը գրանցվել է գրանցամատյանում: «Ականատես»-ի ներկայացուցչի հետ գրույցի ընթացքում «Ժողովրդավարության իրավունքի միջազգային կենտրոն» ՀԿ-ի դիտորդը ներկայացել է որպես «Իմ հզոր համայնք» կուսակցության ներկայացուցիչ, այսինքն՝ փաստել է, որ տվյալ կազմակերպությունն իրականացնում է կողմնակալ դիտորդություն: Եղել են դրվագներ, երբ ակնհայտ է եղել նշված հասարակական կազմակերպության դիտորդների փաստացի համակարգումը «Իմ հզոր համայնքի» վստահված անձանց կողմից:

Միսավան գյուղի ընտրատեղամասում տեղի է ունեցել քարոզի իրականացում, որին ակտիվորեն սատարել են հանձնաժողովի երկու անդամը: Թեկնածուի ընտրատեղամաս մտնելիս նրանք հոտնկայս ծափահարել են և աջակցության կոչեր անել՝ խաթարելով ընտրական գործընթացը: «Ականատես»-ի դիտորդի առաջարկով նախագահը գրավոր դիտողություն է արել և հրավիրել ոստիկանների ուշադրությունը:

Քվեարկության արդյունքների ամփոփում

Քվեարկության ամփոփման ընթացքը եղել է հանդարտ, էական խախտումներ չեն արձանագրվել:

Արձանագրված խնդիրների հիման վրա դիմում-բողոքներ չեն ներկայացվել

Տեղամասային հանձնաժողովների աշխատանքը

Բազմաթիվ տեղամասերում նկատվել է տեղամասային հանձնաժողովների անդամների, իսկ որոշներում նույնիսկ նախագահների անտեղակություն քվեարկության օրվա գործընթացներից ու կարգից:

Հասարակական կարգ և իրավապահ մարմինների աշխատանք

Արձանագրված հիմնական խնդիրներից են մարդկանց և մեքենաների կուտակումները տեղամասերի մոտակայքում՝ երբեմն նաև 50մ շառավղով տարածքներում: Նման կուտակումներ արձանագրվել են թվով 15 տեղամասում: Կուտակումներ դիտարկվել են նաև համայնքապետարանների, գյուղապետարանների և կուսակցությունների շտաբերին հարող տարածքներում:

Նկատվել են անհամաչափ թվով ոստիկանական ուժեր՝ կարմիր բերետավորներ, պարեկներ, ինչպես նաև՝ ոստիկանության հատուկ նշանակության վարչության ներկայացուցիչներ:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի աշխատանք

Ընտրության ավարտից և հաշվարկներից հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների հետ աշխատանքն ընթացել է բնականոն հունով և քվեապարկերն ապահով ներկայացվել են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից մանրամասն դիտարկման են ենթարկվել գրանցամատյաններում առկա գրություններին ու կազմված արձանագրություններին և յուրաքանչյուր դեպքի համար տեղամասային հանձնաժողովի նախագահների կողմից բացատրագրեր են կազմվել տեղում:

Դիտորդական առաքելության մասին

«Ականատեսի» նպատակն է նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը, ընտրական գործընթացների օրինավորությանը և դրանց նկատմամբ հանրային վերահսկողությանը: Դիտորդական առաքելության անդամներն են Թրանսպարենսի Ինչեթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀՎ) ու «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» (ԺԱԱ) հասարակական կազմակերպությունները, «Ռեսուսարտ» քաղաքացիական նախաձեռնությունը և Իդավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը:

«Ականատեսը» հիմնադրվել է 2018 թ.-ի օգոստոսին: Այն գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակարության սկզբունքը և զերծ մնալով այնպիսի գործողություններից, որոնք կարող են մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի), թեկնածուի օգտին կամ դեմ:

2022 թ. մարտի 27-ի ՏԻՄ ընտրությունների դիտարկումն իրականացվել է Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի աջակցությամբ:

Սույն տեղեկանքի բովանդակության համար պատասխանատու են «Ականատես» դիտորդական առաքելությունն ու դրա անդամ կազմակերպությունները, և այն չի արտացոլում դրամաշնորհատուների տեսակետները: